[315286]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«18» ...07... 2018թ. N 81-Ա/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ԹԻՎ 49-Ա/1 ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 3-Ի ԹԻՎ 62-Ա/1 ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու և աշխատակարգը հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2009 թվականի փոտրվարի 16-ի N 26-Ա/1 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 49-Ա/1 հրամանի 3-րդ կետում «Դ. Հակոբյանին» բառերը փոխարինել «Ա. Պետրոսյանին» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի հունվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի կազմը հաստատելու մասին» N 62-Ա/1 հրամանի.

1) 5-րդ կետում «Դ. Հակոբյանին» բառերը փոխարինել «Ա. Պետրոսյանին» բառերով:

2) հավելվածի 1-ին կետում «Արտեմ Ասատրյան» բառերը փոխարինել «Մանե Թանդիլյան» բառերով.

3) հավելվածի 10-րդ կետում «Գոռ Աբրահամյան» բառերը փոխարինել «Հակոբ Բալասյան» բառերով.

4) հավելվածի 11-րդ կետում «Աշոտ Քոչարյան» բառերը փոխարինել «Սպարտակ Սարգսյան» բառերով:

Մ.ԹԱՆԴԻԼՅԱՆ